ԹԵՐԵԶԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
ԱՐՍԻՆԵ ԱՎԴԱԼՅԱՆ

ԶՈՒԳԱԲԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍԵԲԵՈՍԻ ԼԵԶՎՈՒՄ

Սեբեոսի երկում լայն կիրառություն ունեն զուգաբայական հարադրությունները[1] կազմված երկու կամ ավելի բայական բաղադրիչներով. Իսկ այնք, որ էին ընդ նոսա, խնդրեցին երդումն և պայման և *եկին կացին* առաջի Սմբատայ[2]: Եւ ինքն *գնացեալ միանայր* ի զաւրն Խոռեմայ (150)……և գումարեալ զամենայն զաւրն կողմանց Արևելից՝ *դիմեաց գնաց* յԱսորեստան (114): Եւ այնպէս *քակեալ պատառեաց* զնոսա ի Հոռոմոց նեռին արքանեակն (262)……և դառնայ առ ամուր աշխարհաւն Մարաց. *գայ հասանէ* ի Փայտակարան (174): Եւ երակլոս *հասեալ բանակեցաւ* առ դուրս մերձ Տիզբոն քաղաքի(178): . և ինքեանք *չոգան անցին* յԱսորեստան (206):

Սեբեոսի լեզվում երկբաղադրիչ զուգաբայերի համեմատ սահմանափակ կիրառություններով հանդես են եկել նաև երեք բայական բաղադրիչներով կազմված հարադրությունները, որոնք իրենց մեջ ներառում են մի քանի գործողություններ՝ արտահայտելով մի ընդհանուր նշանակություն: Սակայն նշված բարդությունների բաղադրիչների միջև դրսևորվող կապը երկանդամ զուգաբայերի համեմատությամբ ավելի թույլ է[3], օրինակ՝ Յոհվան Պատրիկ և զաւրք Յունաց *պատեալ պաշարեալ պահէին* զքաղաքն Ղընայ (62): Զի *չուեաց խաղաց գնաց* Հայկն ի Բաբելոնէ կնաւն և որդւովքն և ամենայն աղխիւն հանդերձ (6): Արդ՝ առեալ ապստամբին միհրացելոյն զզաւրս իւր. *չու արարեալ գնայ հասանէ* յԱտրպատական (68):

Սեբեոսի «Պատմության» մեջ. որպես բարդության առաջին բաղադրիչներ. հանդես եկել և մեծ թվով զուգաբայեր են կազմել *երթալ* (*երթալ խնդրել* (220), *երթալ տեսանել* (120), *երթեալ իջանէ* (10), *երթեալ մտին* (66), *երթեալ կացին* (110), *երթեալ հասանէին* (118), *երթ գնայ* (198), *չոգաւ կալաւ* (10),

[1] Զուգադիր բայերի հարցի քննության պատմությունը տե՛ս Ա. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը. Երևան, 1966, էջ 279-292:
[2] Պատմութիւն Սեբէոսի, Երեւան, 2004, էջ 118: Այսուհետ փակագծերում կնշվի միայն օրինակի էջը. և նախադասությունները անհրաժեշտության դեպքում կտրվեն կրճատումներով:
[3] Տե՛ս Ա.Մարգարյան, նշված աշխատություն, էջ 299:

չոգաւ էջ (270), *չոգաւ անկաւ* (280), *չոգաւ եմուտ* (266), *երթեալ եհար* (134), *երթեալ ամրացան* (222), *երթեալ միացան* (92), *բանակէր* (126), *երթեալ պաշարէր* (130), *երթալ ծներել* (266), *երթալ սատակել* (278), *երթեալ ժողովեաց* (190), և այլն)), ***գալ*** (*գայ հասանէ* (8), *եկն ել* (122), *եկն անց* (180), *եկն կարգեցաւ* (220), *եկն դադարեաց* (286), *եկին ածին* (74), *եկեալ բանակեցաւ* (138), *եկին ժողովեցան* (220), *եկեալ բնակեցաւ* (14), *եկն եկաց* (78), *եկն մերձեցաւ* (130) և այլն), ***տանել*** (*տարեալ իջուցին* (286), *տանի հասուցանէ* (102), *տարեալ եդեալ* (208)), *տանել բնակեցուցանել* (146), *տարան թաղեցին* (220), ***գնալ*** (*գնաց մեկնեցաւ* (196), *գնացեալ միանայր* (150), *գնացին անցին* (284), *գնացեալ հասանէ* (150)), ***անցանել*** (*անցեալ գնայ* (152), *անցեալ կալաւ* (152) և այլն) բայերը: Սահմանափակ կիրառությամբ հանդես են եկել նաև հետևյալ բայերը ***դառնալ*** (*դարձաւ եկն* (216), *դարձեալ-բանակեցան* (198)), ***բերել*** (*բերեալ մատոյց* (242), ***խաղալ*** (*խաղայ գնայ* (18), *խաղացեալ գայր* (46)), ***դիմել*** (դիմէ գնայ (8), *դիմեալ գայ* (8), ***հատանել*** (*հատանէ անցանէ* (10)), ***առնուլ*** (*առնու գնայ* (16), *առին գնացին* (82)), ***հանել*** (*եհան արձակեաց* (134), *հանեալ ի բաց ձգէին* (140)), ***ելանել*** (*ելեալ բանակեցան* (154), *ելեալ գնացին* (150)), ***հասանել*** (*հասեալ բանակեցաւ* (174), *հասեալ անցանէ* (174)) և այլ բայեր:

Ինչպես երևում է օրինակներից, դրանք գրաբարի բառապաշարի գործուն շերտի բառեր են, որոնց մեծ մասը պահպանել է զուգադրական բայեր կազմելու հատկությունը նաև ժամանակակից հայերենում ենթարկվելով որոշակի փոփոխությունների. *ելանել* (*ելնել*), *տանել*, *գալ*, *գնալ*, *անցանել* (*անցնել*), իսկ որոշ բայեր կորցրել են զուգաբայեր կազմելու իրենց ուժը. *երթալ*, *ածել*, *խաղալ*:

Նշված բայերը կարող են կիրառվել նաև վերջադաս կախված այն հանգամանքից, թե այդ բաղադրիչներով արտահայտված գործողություններից որն է տրամաբանորեն հաջորդում մյուսին, հմմտ. *գնացեալ միանայր* (150) և *յարուցեալ գնաց* (116), *հասեալ անցանէ* (174) և *տանի հասուցանէ* (102), *եմուտ եկաց* (248) և *չոգաւ եմուտ* (266), *գումարեալ ժողովեցան* (202) և *ժողովեալ գումարեց* (142): Սրանից հետևում է, որ պարտադիր չէ բայական բաղադրիչների զուգադրումն իբրև մեկ բառային միավոր. միևնույն բայն, ըստ խոսքային իրադրության, կարող է բաղադրվել և զուգաբայեր կազմել մեծ թվով այլ բայերի հետ, բայց դրանք բաղադրվել են ոչ թե պատահականորեն, այլ ըստ իրենց արտահայտած նշանակության: Սեբեոսի լեզվում մեծ թվով բայերի հետ բաղադրվելու և զուգաբայեր կազմելու հատկությամբ աչքի են ընկնում ընթացք, շարժում անվանող բայերը, օրինակ՝ Իսկ բազմութիւն զաւրաց

Հոռոմին *չոգան մտին* ի Կոստանդնուպալիս պահապան քաղաքին (276)։ Եւ եղեւ ի վաղիւ անդր *դիմեաց գնաց* ի վերայ նոցա զաւրն Պարսից (140)։ Եւ խնդրեաց ի նմանէ զաւր սակաւ, և *մեկնեցան գնացին* ի միմեանց (186)։ Եւ ահա *եկին հասին* ի Քաղկեդոն նաւք մեծամեծք յԱղեքսանդրացւոց կողմանէ (278) Եւ *դարձաւ եկն* անդրէն ի զաւրս Հայոց (216)։ Եւ երկկլոս *հասեալ բանակեցաւ* առ դուրս մերձ Տիզբոն քաղաքի (178)։ Եւ ինքն *գնացեալ միանայր* ի զաւրն Խոռեմայ (150)։ Եւ ինքն .... *անցեալ կալաւ* զՏարսաւն քաղաք և զամենայն բնակիչս Կիւլիկեցւոց գաւառին (152)։ Եւ արդ՝ *դիմեալ գայք* ի վերայ իմ կորուսանել զայնչափ վաստակս ձեր (70)։ Իբրեւ *եկն մերձեցաւ* զաւրն՝ թողին նոքա զքաղաքն և գնացին (130)։ Եւ գնաց իսմայելացին ի վերայ նոցա պատերազմաւ՝ *երթալ սատակել* զնոսա իսպառ (278)։ Նշված, ինչպես նաև մի շարք այլ բայերի հետ կապակցվել և իբրև բարդության երկորդ բաղադրիչներ հանդես են եկել տարբեր բնույթի բայեր, որոնք ցույց են տալիս առաջին բաղադրիչով արտահայտված գործողության նպատակը (*երթալ սատակել* (278), *երթեալ ի բաց հատցեն* (226), *երթալ ծմերել* (266), հետևանքը (*երթեալ կային* (110), *եկ եկացն* (78)) և այլն։

Ոճական նկատառումով զուգաբայեր են ձևավորվել նաև համանման կամ մերձակից գործողության գաղափար արտահայտող բայերով, ինչպես՝ Եւ ի ժամ վախճանին *ծագեալ փայլակնացեալ* զնովաւ լոյս աստուածային Բանին (52) Վեպ արիական, վանումն տիեզերական, հէն Սասանական՝ յԱպրուէզն Խոսրովեան, որ *հրդեհեալ բոցացոյց* զառ ի ներքոյս ամենայն (58)։... և *մարտ եղեալ կռուեցաւ* ընդ նոսա (286)։... զի *պատառեալ բաժանեցան* զաւրք աշխարհին Պարսից յերիս մասունս (186)։ Եւ այնպէս *քակեալ պատառեաց* զնոսա ի Հոռոմոց նեռին արբանեակն (262)։... և այլ ևս բազմութիւն զաւրաց *ժողովեալ գումարեաց* (142)։... ի ներքուստ ցասմամբ *բարբառեալ ասէր* (62)։ Սմբատ կոչի անդրէն ի դուռն Պարսից, պատուի տանուտերութեամբ՝ որ *անուանեալ կոչի Խոսրով* Շում (120)։ Զի *չուեաց խաղաց գնաց* Հայկն ի Բաբելոնէ (6), սակայն խոսքային իրադրության մեջ զուգաբայեր կազմող բաղադրիչները հավասարարժեք չեն. «Խոսքային իրադրության համար մեկը շարադասությամբ վերջադասն է կարևորը, հիմնականը, մինչդեռ նախադաս մեկ կամ երկու բաղադրիչները պարզապես ոճավորում են գործողությունը մանրամասնելով այն»[4]։

Բնագրում այլ բայերի հետ բաղադրվել և զուգաբայեր են կազմել նաև հարադրավոր բայերը։ Օրինակ՝ Եւ *կալեալ ճանապարհ գնաց* ի Մեղիտինէ (48)։ .... և ապա անտի *չու արարեալ երթայր* ի կողմանս Պարթևաց (108)։....իսկ

---

[4] Գ. Խաչատրյան, Գրաբարի վերլուծական բայերի արժույթը, Եր., 2000, էջ 205։

նոքա *զհետ մտեալ հարին* զնոսա ի սուր սուսերի իւրեանց (202): Մտադրութեամբ և ամենայն հնազանդութեամբ *չու յուղի անկեալ գնացին* (68): Եւ արշաւեաց Տաճիկն ի վերայ Յունին, որ *մարտ եղեալ կռուէին* ընդ բերդին Նախճաւանի (286): Իբրև *անցին գնացին փախստական*, և խորհեալ ի ճանապարհի, թէ ո՞ր լաւագոյն իցէ, երթալ առ արքայն Տաճկա՞ց, եթէ առ թագաւորն Յունաց (66): Զնա հրամայեաց արձակել ի Հայս, զի *երթեալ ի բաց հատցեն* զհակառակութիւնն (226): Իսկ այս ոչ այսպէս պատկանէր. քանզի *խորհուրդ արարեալ խորհին* արանց և փուշտիպանաց արքային, զի սպանցեն զՈրմիզդ (64): Եւ *երթեալ յանդիման լինի* թագաւորին ի Մեծ անուանեալ Դաստակերտին (120):.... հասանէին մանկունք իշխանացն, և *հանեալ ի բաց ձգէին* զզէնն (140): Ինչպես երևում է օրինակներից, որպես զուգաբայական հարադրությունների առաջին բաղադրիչներ հանդես են եկել այն հարադրավոր բայերը, որոնք արտահայտում են շարժման, ուղևորման (*զհետ մտանել, ճանապարհ ունել, չու առնել, չու յուղի անկանել*) կամ համանման գործողության գաղափար (*մարտ եղեալ կռուէին, ճանապարհ կալեալ գնացին, խորհուրդ արարեալ խորհին*):

Սեքնոսի երկում զուգաբայերն արտահայտվել են՝

ա. *անդեմ բայաձևերով*, օրինակ՝ Յայնժամ հրաման ետ նոցա *երթալ դադարել* յիւրաքանչիւր ի բնակութիւն (196):.... և խորհէր *երթալ հարկանել* զՎիրս սրով սուսերի (278): Եւ գնաց Իսմայելացին ի վերայ նոցա պատերազմաւ՝ *երթալ սատակել* զնոսա իսպառ (278):....և դադարեալ հանգուցանէ զզաւրս իւր մինչև *ի գալ հասանել* գարնայնոյ ժամանակի (136): Գնացին նոյնպէս և զաւրն Գեղումն որ ընդ նմա, *եկեալ հասեալ* փութանակի յամուրս աշխարհին իւրեանց (114): Եւ ի ժամ վախճանին *ծագեալ փայլականացեալ* վնովաւ լոյս աստուածային Բանին(52): Եւ փութանակի ժողովեալ և *առեալ գնացեալ* զբազմութիւն քաջ և մարտիկ ազգացն արևելից (62):

բ. *դիմավոր բայաձևերով*, օրինակ՝ Եւ եղև իբրև տեսին, թէ *գնաց մեկնեցաւ* ի նոցունէ զաւրն Պարսից ....(196)՝ Արդ *եկեալ հասեալ եմ* այսպիսի զինու, և նա յինէն ոչ փախիցէ (176): Ի դիմի հարան նմա արք երեք հրէայք ի գլխաւորաց նոցունց, որոց էին սպանեալ խոզս երկուս և *տարեալ եղեալ* [էին] ի տեղի աղաւթիցն (208): Բայց *երթ կա՛ց* ուր և հրամայեցից քեզ (198): «....այլ միայն սրտիւ սիրեցէ՛ք զԱստուածն Աբրահամու և *երթա՛յք կալարու՛ք* զերկիրն ձեր»(196): *«Ե՛րթ կա՛լ զտեղին քո»*(214): *Ե՛րթ գնա՛* խաղաղութեամբ յերկիր քոյ (198)՝ «*Եկա՛ յք ելցու՛ք* ի լեառն տեառն և ի տունն Աստուծոյ Յակովբայ»(162): Արձակեա՛ զնա, և *թո՛ղ երթայ* խաղաղութեամբ (204): «.... *թո՛ղ եկեսցէ*, որպէս և կամեսցի»(80): «.... *թո՛ղ սպառեսցեն* զմիմեանս, և մեք հանգիցուք (68):

Հրամայական եղանակի բայածներով և դիմավոր բայերով բաղադրված զուգաբայերի բաղադրիչների դիմային և թվային համաձայնությունը պատահական է և ոչ պարտադիր: Նշված կաղապարով զուգադրական բայերի առնչությամբ Գ. Խաչատրյանը գրում է. «.... հրամայական եղանակի բայածնը պարտադիր կերպով գրավում է նախադաս դիրք և հանդես է գալիս ոչ թե իր բուն բառային ու քերականական իմաստներով, այլ սոսկ եղանակավորում է իրեն հաջորդող բաղադրիչով արտահայտված գործողությունը»:[5]

գ. «*Անցյալ դերբայ + դիմավոր բայ*» *կաղապարով* Եւ ***երթեալ յանդիման լիցի*** թագաւորին ի Մեծ անուանեալ Դաստակերտին (120): Ապա ***ելեալ բանակեցան*** արտաքոյ քաղաքին և այրեցին զքաղաքն հուրբ (154): Եւ անենայն մնացորդք ժողովրդեան որդւոցն Իսմայելի ***ժողովեալ միաբանեցան*** ի միասին(198): ...զի ինքն իսկ արքայն Քուշանաց ***խաղացեալ գայր*** ի վերայ նորա զաւրու մեծաւ (46): Եւ ***չուեալք գնացին*** բանակք բանակք ըստ իւրաքանչիւր նահապետութեանց (198): Վերջին օրինակում անցյալ դերբայով արտահայտված բաղադրիչը թվի քերականական կարգով համաձայնել է հոգնակի ենթակայի (տվյալ դեպքում՝ զեղչված) հետ: Սակայն այս համաձայնությունը պարտադիր չէ:

Եռաբաղադրիչ զուգաբայերում անդեմ ձևերով կարող են հանդես գալ առաջին և երկրորդ բաղադրիչները (... և միւսով մասամբն գնաց ինքն ի վերայ զաւրուն, որ ***պատեալ պաշարեալ պահէին*** զՈւրհայ (134)) կամ միայն առաջին բաղադրիչը (Առեալ ապստամբին միհրացելոյն զզաւրս իւր, ***չու արարեալ գնայ հասանէ*** յԱտրպատական (68)):

Ուսումնասիրվող երկում *«անցյալ դերբայ + դիմավոր բայածևով»* արտահայտված զուգաբայերում անցյալ դերբայով հանդես են եկել հիմնականում շարժում, ընթացք, ուղևորություն անվանող բայերը, ինչպես՝ *երթալ, գալ, չու առնել, չուել, դիմել, գնալ, խաղալ, ճանապարհ ունել* և այլն: Դրանք զուգադրվել և զուգաբայեր են կազմել այն դիմավոր բայածևերի հետ, որոնք կամ համանման գործողության գաղափար են արտահայտում (օրինակ՝ *չու արարեալ երթայր* (108), *չուեալք գնացին* (198), *դիմեալ գնայր* (124), *դիմեալ գայք* (70), *ճանապարհ կալեալ գնացին* (110), *խաղացեալ գայր*(46)), կամ որոնց հետ միմյանց հաջորդող գործողությունների սերտ միասնություն են կազմում (ինչպես՝ *երթեալ միացան* (92), *երթեալ յանդիման լիցի* (120), *եկեալ բանակեցան* (204), *գնացեալ միանայր* (150)): Հակառակ դեպքում դրանք զուգադրական բայեր չեն ձևավորում և դրանցից ամեն մեկը պահպանում է իր շարահյուսական ինքնուրույնությունը, օրինակ ***Ապստամբեալ ի բաց կացին***

---

[5] Գ. Խաչատրյան, նշված աշխատություն, էջ 209:

Պարթևք ի ծառայութենէ Մակեդոնացւոց (16): Քանզի տեսանելով զհաւայս նորա չարաչարս *զարհուրեալ խոտորեցան* սիրտք իւրեանց ի նմանէ (78): որոց ինքեանք իսկ *ականատես եղեալ պատմեցին* մեզ զայս բան (206):

Թեև լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ զուգաբայական բարդությունների բաղադրիչները կարող են նախադասության այլ անդամներով բաժանվել միմյանցից, որով չի խաթարվում զուգաբայեր կազմող բաղադրիչների միջոցով անվանվող գործողությունների անընդհատությունը[6], բայց *«անցյալ դերբայ + դիմավոր բայածև»* մասնակաղապարով ձևավորված բայերը, նախադասության այլ անդամներով ընդմիջվելով, դադարում են զուգաբայեր լինելուց: Հմմտ. Գնայր և ապստամբն Վստամն յամուր յերկիրն Գեղմայ, որ և ապա անտի *չու արարեալ երթայր* ի կողմանս Պարթևաց (108) և եւ թագաւորին *չու արարեալ* յԱսորեստան *հասանէր* ի բուն կայանս իւրոյ արքունականս (108): Իսկ ասպետ առեալ զկնի իւր և զորդիս՝ փախեաւ ի գիշերի, և *ճանապարհ կալեալ գնաց* ի Տարաւն (190) և .... և *ճանապարհ կալեալ* ընդ կողմանս հիւսիսոյ՝ *եկ* դէպ ուղիղ ի Կարնոյ քաղաք (172): Եւ անց ընդ գետաւն առ Վարդանակերտաւն աւանաւ, *երթեալ թափեցաւ* ի Գոգովիտ գաւառ (176) և եւ *երթեալ* ի Դուին՝ *նստաւ* ի տան կաթուղիկոսին (266): Եւ *անցեալ գնաց* յԱսորեստան ի կողմանս Անտիբաքացւոց (152) և եւ նոքա *անցեալ* ընդ Յորդանան՝ *բանակեցան* յերիքով (200): Սակայն քացառիկ կիրառություններում համանման գործողության գաղափար արտահայտող անցյալ դերբայը և դիմավոր բայածևը, նախադասության այլ անդամներով ընդմիջվելով հանդերձ, չեն պահպանում իրենց շարահյուսական ինքնուրույնությունը և հանդես են գալիս որպես զուգաբայական բարդության բաղադրիչներ: Օրինակ՝ Շինեալ քաղաք և անուանեալ զնա Վեհ Անջատոթ Խոսրով, զոր *անուանեալ* Շահաստանի Նոկ–Նոյ *կոչեն* (52):.... և ի մէջ երկուց ճակատուցն *մարտ եղեալ* ընդ միմեանս *կռուէին* (126):

Սեբեոսի լեզվում գործածված զուգաբայերը հիմնականում համասեռ բայերի զուգորդումներ են՝ կազմված՝

ա. *ներգործական սեռի բայերով*. Եւ անդէն ծերբակալ արարեալ զախոյեանն անարի զթագաւորն Գոգաց *ածեալ կացուցանէ* յանդիման կայսերն Դիոկղետիանոսի (28): Եւ բարձին զմարմին նորա և *տարան թաղեցին* առ հաւրն իւրում ի Դարիւնս (220): Հրաման ետ նմա՝ փոխել զբնակիչս ի Կարնոյ քաղաքէ և *տանել բնակեցուցանել* յԱիմատեան շահաստանի (146): .... և հասեալ ի Միջագետս Ասորւոց, *պատեալ պաշարեն* զՈւռհայ քաղաք (144): [Ոստակէս] *բերեալ մատոյց* առաջի քրիստոսասէր թագաւորին Տրդատայ (242):

---

[6] Տե՛ս Ա. Մարգարյան, նշված աշխատություն, էջ 297:

բ. *չեզոք սեռի բայերով.* Եւ արքայ Կաւատ *եկն անց* ամենայն զաւրաւքն իւրովք (180): Եւ մինչ ժողովեալ կային միահամուռ յաւսկեաւծ պատշգամբի միոջ՝ *եմուտ եկաց* ի մեջ նոցա (248): «....*երթ գնա* խաղաղությամբ յերկիր քոյ» (198): Մինչդեռ *եկեալ հասանէր* համբաւն խռովութեան մեծի, և Պրիսկոս *յարուցեալ գնայր* անհնարին տագնապաւ (132): Ապա *ելեալ բանակեցան* արտաքոյ քաղաքին և այրեցին զքաղաքն հուրբ (154):

գ. Կրավորական սեռի քերականական իմաստ արտահայտող բայերով. Էին ապստամբ ի ժամանակին յայնմիկ յարքայէն Պարսից երկիրքն, որ *անուանեալ կոչին* Ամաղ, Ռոյեան.... (112): Հրամայէ ևս հանել ի վեր զորդի նորա զՎարազտիրոց, որ *անուանեալ կոչէր* յարքայէ Զավիտեան Խոսրով (126) (Անցյալ դերբայով արտահայտված բաղադրիչը, հասարակ լինելով, տվյալ կիրառության մեջ արտահայտում է կրավորական սեռի քերականական իմաստ):

Օրինակներից երևում է, որ սեռի քերականական կարգով միատիպ բայերով ձևավորված զուգաբայական հարադրությունները բնութագրվում են երկուսին հատուկ սեռով:

Զուգաբայեր են կազմվել նաև տարբեր սեռի բայերի հարադրումով: Բնագրում գործածության մեծ հաճախականություն ունեն «*չեզոք բայ - ներգործական բայ*» կաղապարով ձևավորված բարդությունները. Արդ ի՞նչ ընդ այն արք ի վայր ի բերդէն *երթալ խնդրել* զաւրն յաւգնականութիւն իւրեանց (220): ....և զաւրացեալ զաւրն Պարսից *անցեալ կալաւ* զՏարսաւն քաղաք (152): Եւ նորա *երթեալ եհար* զԱնտիոք և զերուսաղեմ սրով սուսերի (134): Եւ *եկին ածին* յանդիման թագաւորին (74): [Ոեմետրիոս] *չոգաւ կալաւ* զԲաբելովն (16): Նախորդող չեզոք սեռի բայերով արտահայտված բաղադրիչներով անվանվում է ընթացք, ուղղություն, որին հետևում է ներգործական սեռի բայով արտահայտված գործողությունը (*չոգաւ կալաւ* (16), *եկին ածին* (74), *երթալ տեսանել* (120), *երթեալ պաշարէր* (130), *երթեալ ի բաց հատցեն* (226) և այլն):

Ի տարբերություն առաջին կառույցների՝ «*ներգործական սեռի բայ - չեզոք բայ*» կաղապարով կազմված բարդություններն անհամեմատ քիչ են և ձևավորվել են հիմնականում «*առնուլ*» բայի միջոցով, որի կողմից պարտադիր կերպով պահանջվող ուղիղ խնդիրը տեղաշարժվել է զուգաբայից առաջ կամ հետո խախտելով ներգործական բայի պահանջած սեռի խնդրի շարադասությունը (Եւ փութանակի ժողովեալ և *առեալ գնացեալ զբազմութիւն* քաջ և մարտիկ ազգացն արևելից (62)), իսկ եթե սեռի խնդիրը հաջորդի ներգործական սեռի բային, արդյունքում կստացվի երկու տարբեր, իրարից անկախ

գործողություններ (Ապա *առնու զգաւրսն* իւր և *գնայ* ի վերայ նորա ի Հայս(12): Յայնժամ արքայն Խոսրով *առնոյր զգաւրս* իւր և *գնայր* ի վերայ նորա(108)):

Ներգործական սեռի բայը նախադաս կիրառությամբ զուգաբայեր է կազմել նաև այն դեպքում, երբ սեռի խնդիրը նախադասության բովանդակության պլանում ենթադրվելու դեպքում չի հիշատակվել. օրինակ Կնքէր գինքն նովաւ, և *առեալ գնայր* գիետ ընկերաց իւրոց(116): Կապէ զնա Արշակ արքայ ոտիւք և ձեռաւք, և *առնու գնայ* յարևելս ի Բահլ Շահաստան(16): Եւ ածեալ նմա ջրոիս, և բերեալ նմա դեսպակ արքունի, և *առին գնացին* (88): Եւ ապա կապեսցեն զասպետ և *առեալ գնասցեն* (190):

Սեռի քերականական կարգով տարբեր բայերով ձևավորված զուգաբայերը ձեռք են բերում *ներգործական* սեռի քերականական իմաստ: Այսպես Հրամայէ *երթալ տեսանել* զերկիր իւր (120), Յայնժամ ժողովէր զամենայն զաւրս իւր ստրատելատն, և *երթեալ պաշարէր զբերդն* շուրջանակի զամենն (130), Զորաժողով լեալ և Դեմետրիոս, *չոգաւ կալաւ* զԲաբելովն (16): Եւ ապա կապեսցեն զասպետ և *առեալ [զասպետ] գնասցեն* (190):

Զուգադրական բարդությունները, իբրև բայական բառային միավորներ, հատկանշվում են բային հատուկ ձևաբանական առանձնահատկություններով և շարահյուսական կիրառություններով: Հիշյալ բայերը նախադասության մեջ հանդես են գալիս *դիմավոր* և *անդեմ* ձևերով՝ կատարելով շարահյուսական տարբեր գործառույթներ: Առաջին խմբի բայերը միշտ հանդես են գալիս իբրև բայական ստորոգյալ, օրինակ՝ Եւ Սահակ *տանի հասուցանէ* զզաւրն ի պաղատն (102): ... և *ելին գնացին* ամենեքեան ըստ ասացելումն բանին (140): Եւ *եկին ժողովեցան* ի Հերևան (220): Եւ խնդրեաց ի նմանէ զաւր ուսկաւ. և *մեկնեցան գնացին* ի միմեանց (186): Իսկ ինչ վերաբերում է անդեմ ձևերին, ապա դրանք կատարում են այն գործառույթները, որոնք հատուկ են պարզ բայերի անդեմ ձևերին: Սերեոսի երկում զուգաբայերի անդեմ ձևերը հանդես են եկել *ստորոգելիի* (Յայնժամ հրաման ետ նոցա *երթալ դադարել* յիւաքանչիւր ի բնակութիւն (196):....և խորհէր *երթալ հարկանել* զՎիրս սրով սուսերի (278): Իսկ արքայ Կոստանդին կամեցաւ առնուլ աւար զզաւրացն բազմութեան. և *երթալ ծմերել* ի Հայս (266)), *նպատակի պարագայի* (Իջին արք ի վայր ի բերդէն՝ *երթալ խնդրել* ի Դարաւնից զաւր յաւգնականութիւն իւրեանց (220)), *ժամանակի պարագայի* ([Զուանն Վեհ] դադարեալ հանգուցանէ զզաւրս իւր մինչև *ի գալ հասանել* գարնայնոյ ժամանակի(136)) գործառույթներով: